

**ԽԱԼՅՈՒԲՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ
ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ***

Հովհաննես Խորիկյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Խալյուբների տեղադրության վերաբերյալ հին աղբյուրների տեղեկություններն աչքի են ընկնում հակասականությամբ և խառնաշփոթությամբ, ինչը մասնագիտական գրականության մեջ հանգեցրել է տեղագրական բնույթի տարաբնույթ ենթադրությունների առաջաջանմանը: Այսպես, մի քանի աղբյուրներում խալյուբները հիշատակվում են տիբարեններից արևմուտք¹, այն դեպքում, երբ ականատես պատմիչ Քսենոփոնը խալյուբներին հիշատակում է որպես մոսսինոյկներին ենթակա ցեղ, որը փոքրաթիվ էր և, ի տարբերություն մյուս կամ արևելյան խալյուբների, զբաղվում էր երկաթագործությամբ և նրանց արտադրանքը վաճառվում էր մոսսինոյկների միջոցով: Խալյուբներից անմիջապես արևմուտք հեղինակները մտնում են տիբարենների երկիրը²:

Հերոդոտոսը տիբարեններից առաջ հիշատակում է մուսբերին, որոնք մտնում էին XIX սատրապության մեջ³: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հույն պատմիչներից միայն Քսենոփոնն է խալյուբներին տեղադրում ճորոխից արևելք՝ հայերի հյուսիսային սահմանակցությամբ⁴: Երկու հեղինակներ խալյուբներին տեղադրում են Հալիս գետից արևմուտք: Առաջինը Հերոդոտոսն է, որը խալյուբներին հիշատակում է Կրեսոսին ենթակա ժողովուրդների շարքում, որոնք ապրել են Հալիսից արևմուտք⁵: Հարկ է նշել, որ այս հիշատակությունը ուսումնասիրողները դիտել են որպես ուշ շրջանի ընդմիջարկություն⁶, չնայած, մեր կարծիքով,

*Հոդվածը ընդունվել է 20.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժինը:

¹Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе (այսուհետև՝ ИДИСК), «Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1947, № 3, с. 280-281, 288, 290; 1949, № 2, с. 287. Տիբարենների, մակրոնների, մոսսինոյկների մասին մանրամասն տես Խորիկյան Հ., Արեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, «Քանթեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, էջ 114-116:

² Քսենոփոն, Անաբասիս (այսուհետև՝ Անաբասիս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 121:

³ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 94; Herodotus (with an English translation by A. D. Godley), v. II-III, Cambridge, Mass.-London, 1957 (Loeb Classical Library), III, 94, p. 122-123.

⁴ Անաբասիս, էջ 103:

⁵ Հերոդոտոս, I, 28:

⁶Максимова М., Античные города юго-восточного Причерноморья, М.-Л., 1956, с. 28. Ն. Լոմոնոսովի բացատրում է խալյուբների տեղադրությունը Հալյուսից արևմուտք կամ էլ գետի արևելյան ափին (տես Լոմոնոսովի, К истории Понтийского царства, ч. I, Тбилиси, 1979, с. 123, 126, 135):

խալոսքների անվան տակ հասկացվել են մետաղագործությամբ զբաղվող ցեղեր: Երկրորդ հեղինակը Կլավդիոս Կայսեր ժամանակակից Պոնպոնիոս Մելան է, համաձայն որի, խալոսքներին են պատկանել Ամիսոս և Սինոպ քաղաքները, իսկ գետերից՝ Հալիսը և Թերմոդոնտը: Որ Մելան այդ խալոսքների տակ փորձում է ընկալել հին աղբյուրների խալոսքներին, երևում է այն իրողությունից, որ նրա հաղորդմամբ խալոսքներն ապրել են տիբարենների հարևանությամբ¹:

Անտիկ աղբյուրների մեծամասնությունը խալոսքներին տեղադրում է մերձսևծովյան շրջանում, մասնավորապես Թերմոդոնտի և Կեռասունտի միջև ընկած տարածքում: Քսենոփոնը տիբարեններից արևմուտք չի հիշատակում խալոսքներին, քանի որ Կոտյուրայից հեղինակները շարժվում են արդեն ծովով: Որոշ աղբյուրներում խալոսքները տեղադրվում են Հայաստանի հարևանությամբ, ընդ որում, միաժամանակ ընդունվում է մերձսևծովյան խալոսքների գոյությունը: Հեկատեոս Միլետացին նրանց տեղադրում էր հայերից հյուսիս, որը համընկնում է Քսենոփոնի տեղեկությանը, ըստ որի՝ Հարպասոս գետից արևելք խալոսքները եղել են հայերի հարևանները²: Ստեփանոս Բյուզանդացու կարծիքով, Հեկատեոսը նույնպես նկատի է ունեցել պոնտական խալոսքներին, որոնց, հների վրա հենվելով, հեղինակը տեղադրում է Սև ծովի մոտ, Թերմոդոնտ գետի շրջանում³, ընդ որում պոնտական խալոսքներին (Χάλοβες) նա հակադրում է Հայաստանին հարևան խալոսքներին (Χάλοβοι): Պետք է նշել, որ Հեկատեոսը նկատի է ունեցել արևելյան խալոսքներին: Հույների համար խալոսքները հանդիսացել են երկաթը հայտնագործող ժողովուրդ և երբեմն համարվել են Սկյութիայի ժողովուրդ, որն իր անունը ստացել է Արեսի որդի խալոսքից⁴:

Խալոսքների վերաբերյալ տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս, որ հունա-լատինական հեղինակներն այդ անվանումը ցեղանուն չէին դիտում, այլ զբաղմունք: Կալիմաքոսից սկսած շատ հեղինակներ ընդհանրական անեծք են հղում երկաթը հայտնագործած խալոսքներին, որոնք չարի ստեղծագործությունը հանել էին գետնի տակից⁵: Ռ. Շմիդտը գրում է. «Խալոսքների տեղադրությունն անտիկ ավանդույթում անկայուն է. նրանք տեղադրվում են կամ Պոնտոսի հարավային ծովափում կամ Փոքր Ասիայում, կամ էլ Կովկասում և Հայաստանում: Այս էթնանունը, ըստ

¹ ИДПСК, -“ВДИ”, 1949, № 1, с. 273.

² Անդ., -“ВДИ”, 1947, № 1, с. 301. *Տես նաև Անարասիս, էջ 98, 103:*

³ ИДПСК, -“ВДИ”, 1947, № 1, с. 301; 1948, № 3, с. 329. *Максимова М., Նշվ. աշխ., էջ 29:*

⁴ ИДПСК, -“ВДИ”, 1947, № 1, с. 305; 1947, № 3, с. 269, 287-288.

⁵ Անդ., -“ВДИ”, 1947, № 3, с. 263.

երևութին, դառնում է հասարակ, լայնորեն տարածվում և հատկացվում է այն ժողովուրդներին, որոնք առավելապես զբաղվում են մետաղագործությամբ»: Շարունակելով միտքը՝ հեղինակը եզրակացնում է, որ «խալյուրների մասին տեղեկություններն այնքան խայտաբղետ են, որ դա կամ առասպելներում հանդես եկող լեգենդար ցեղ է, կամ էլ արդեն լրիվ իրական ժողովուրդ... Հավանաբար այս հանգամանքը մի կողմից ցույց է տալիս նրանց մեծ վաղեմությունը, մյուս կողմից՝ նրանց երկարատև բնակությունը մինչև ներկայիս տեղում»¹: Ինչպես տեսնում ենք, Ռ. Շմիդտը վերջնական եզրակացություն ընդունելու հարցում տատանվում է՝ երկմտելով խալյուրներ ցեղի իրական գոյության մեջ:

Մ. Մաքսիմովան մերձսևծովյան խալյուրներին անվանում է հարավարևելյան Մերձսևծովի բնիկ ժողովուրդ և հավանական համարում, որ մոսսիոնյակները եղել են հարավից եկած ցեղերից մեկը, որոնք էլ ենթարկել և մասամբ ոչնչացրել են խալյուրներին: Ինչ վերաբերում է լեռնային խալյուրներին, ապա Մ. Մաքսիմովան ենթադրում է, որ նրանք սկզբնապես մերձսևծովյան խալյուրների հետ կազմել են մեկ ամբողջություն և հարավից շարժվող ցեղերի ճնշման տակ անջատվել նրանցից: Հայտնվելով լեռնային շրջանի նոր պայմաններում՝ նրանք փոխում են և իրենց տնտեսական կացութաձևը, ու մերձպոնտական մետաղագործների համբավը մնում է իրենց մերձսևծովյան համացեղակիցներին²: Մ. Մաքսիմովայի համար խալյուրները իրական ցեղ են, որը հայտնի է եղել իր զբաղմունքի՝ մետաղամշակության շնորհիվ:

Դեռևս XIX դարում Կ. Մյուլլերը կարծիք է հայտնել, որ հույները խալյուրների անվան տակ նկատի են ունեցել ոչ թե որոշակի ցեղ, այլ Փոքր Ասիայի տարբեր շրջաններում ապրող բոլոր այն ցեղերին, որոնք զբաղվել են երկաթի արդյունահանությամբ և մշակմամբ³:

Ուսումնասիրողներից Գ. Մելիքիշվիլին ժամանակին այն միտքն է հայտնել, որ չնայած անտիկ շրջանում լայն տարածված էր եվքսիդյան Պոնտոսի շրջանում ապրող խալյուրների մասին ավանդությունը, ըստ որի՝ նրանք հայտնագործել էին երկաթը և հմուտ մետաղագործներ էին, լուրջ կասկածներ է հարուցում այդ անունը կրող ցեղի գոյությունը: Շարունակելով իր միտքը՝ նա գտնում է, որ «խալյուր» անվանման հետքեր հետազայում այլևս չեն նկատվում, այն դեպքում, երբ «խալդայ» և «խալդ» անվանումը նշված տարածքում երկար ժամանակ պահպանվում է: Առանց Ն. Ադոնցի անունը հիշելու, նա կրկին առաջ է քաշում «խալ-

¹ Максимова М., *Նշվ. աշխ.*, էջ 27:

² *Անդ.*, էջ 26, 31:

³ *Անդ.*, էջ 27:

յուբ»-ի և «խալդայ»-ի նույնության խնդիրը՝ գտնելով, որ «խալյուբ»-ը առաջացել է «խալդ»-ից արևմտավրացական –ip(-ib) հոգնակիակերտ վերջածանցի հավելումով (h₂al-d-ib>h₂alib)¹: Սակայն խալյուբը և խալդայը ծագումնաբանորեն բացարձակապես տարբերվում են իրարից, քանի որ առաջինը անվանում է, իսկ երկրորդը՝ սակ-սկյութների էթնիկական անունը:

Խալյուբների մասին տարակարծություններն առկա են եղել դեռևս անտիկ ժամանակներում: Այսպես, Ստրաբոնը փորձում է ալիզոններին նույնացնել հին խալյուբների հետ, որոնք նրա ժամանակներում խալդայ-ներ էին և հակված է Յոմերոսի «ալյուբ»-ը սրբագրել «խալյուբ»-ի²: Ն. Ադոնցը համամիտ է մեծ աշխարհագետին Chal-ybes-ի և Chal-daei-ի նույնացման խնդրում, գտնելով, որ Chal-di-ն, հավանորեն, հայ խալիբների անվանումն է: Ն. Ադոնցը քիչ հավանական է գտնում ալյուբների ու խալյուբների նույնացումը, քանի որ ալյուբները արժաթ էին մշակում, իսկ խալյուբների հանքերը երկաթ էին պարունակում, իսկ ալիզոններին խալիբների հետ համեմատելը համարում է սոսկ անհիմն ենթադրություն՝ հարց տալով, թե «Hali-zoni և Alibi-ն *ali – ibi-ից արդյոք չէ՞ն մշանակում այն ժողովուրդը, որ զբաղվում էր աղահանքերի մշակությամբ Halis գետի վրա և նրան հարևան խալիբների հետ շփոթելը տեղի չի՞ ունեցել արդյոք նրանց լեռնաարդյունաբերական նույն բնույթը կրող զբաղմունքի հետևանքով: Այդ դեպքում դասական Alyb-ին կհամապատասխաներ հայկական Ալիև- Aliun, *alibn-ին և թերևս an-aliba-ին»³:

Խոսելով խալյուբների մասին՝ անհրաժեշտ է կրկին անդրադառնալ հալիզոններին: Ստրաբոնը Հալիս գետի անունը բխեցնում է աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքի մոտ⁴: Համաձայն Յոմերոսի՝ հալիզոնները Հալիսի հովտում ապրող ցեղ էին, որոնք իրենց անունը տվել էին գետին: Հալիս գետի անունը կապվում է «աղ» բառի հետ⁵, և դա բացառված չէ, քանի որ գետի ջուրը աղի է: Այս դեպքում պետք է ենթադրել, որ հալիզոններ ցեղն է իր անունը ստացել գետից և ոչ թե հակառակը: Հալիս գետը խեթական աղբյուրներում կոչվում է Սարասանտիա, կա նաև համանուն քաղաք և շրջան: Խեթերի մոտ նման քաղաքները և շրջանները սովորաբար զետեղված են համանուն գետերի վերին հոսանքում: Ընդ

¹ Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 71. *Խալդայների նույնացումը ուրարտացիների հետ պետք է անընդունելի համարել (տե՛ս Пиотровский Б., Ванское царство, Москва, 1959, с. 117-121; Он же: История и культура Урарту, Ереван, 1944, с. 326-332):*

² Страбон, География в 17 книгах (այսուհետև՝ Страбон), перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XII, III, 19-20.

³ Ադոնց Ն., Հայաստանը Յոմերոսի հանդեպ դարաշրջանում, Երևան, 1987, էջ 72-73:

⁴ Страбон, XII, III, 12.

⁵ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 146:

որում, Մարասանտիա գետը գլխավորապես ձևավորվում է ներկայիս Սվազի (Սեբաստիա) մոտ¹: Հալիսի հետ նույնացվող Մարասանտիան մեկնաբանվում է որպես «կարմիր գետ», և նրա անունը կապվում լուվ. *mar(r)u-(u)a*՝ «կարմիր» բառի հետ²: Այս գետը երկաթահանքով և կարմիր հողով հարուստ լեռներից բխելու պատճառով ունի կարմիր, պղտոր ջուր: Հետագայում թուրքերը, նկատի ունենալով նրա ջրի կարմրավուն երանգը, Հալիսը անվանել են Ղըզըլ Ըրմակ: Հետևաբար Ն. Արոնցի այն կարծիքը, թե Հալիս գետը ունի լազական և վրացական ծագում՝ «գետ», «ջուր» իմաստով³, սխալ է: Ինչպես տեսանք, ավելի հավանական է, որ գետը երկու դեպքում էլ կա՛մ «աղի», կա՛մ «կարմիր», անունը ստացել է սեփական յուրահատկության շնորհիվ: Մեր կարծիքով, ալիզոնը Հալիսի վերին հոսանքի բնակիչների անվանումն է, որն առաջացել է կա՛մ գետանունից («աղի», «կարմիր»), կա՛մ էլ զբաղմունքից (աղագործներ): Ս. Երեմյանը ալիզոններին տեղադրում է Հալիսի վերին հոսանքում՝ Սեբաստիայի շրջանում⁴: Ընդհանրապես, Հալիսի վերին հոսանքի շրջանը հարուստ է աղահանքերով, պղնձահանքերով, երկաթահանքերով և այլ օգտակար հանածոներով: Հերոդոտոսի մոտ ալազոնները սկյութական ժողովուրդ են Դնեարի ստորին հոսանքի ավազանի շրջանում⁵, և ըստ էության, հետաքրքիր է Պատմահոր այն տեղեկությունը, թե Հյուսպանիս (Հարավային Բուզը-Խ. Հ.) գետի վտակներից մեկի ջուրը խիստ դառնաղի է և գտնվում է երկրագործ սկյութների և ալազոնների սահմանի վրա: Մեր կարծիքով, տվյալ դեպքում ևս, չնայած ալիզոններ-ալազոնների տարբեր աշխարհագրական տեղորոշմանը, նրանց անվանումը կարելի է կապել «աղ» բառի հետ: Ս. Երեմյանի կարծիքով, ալիզոնների Ալսօթ քաղաքը կարող է տեղադրվել Նիկոպոլիսի և Ջիմարայի միջև⁶, այսինքն՝ Հալիսի ակունքների շրջանում: Այլուքների անունը կարելի է, ամենայն հավանականությամբ, կապել Աղյուն գավառի հետ, որը հարուստ էր աղահանքերով, և Հոմերոսի հալիզոնների քաղաք Այլուքեն նույնացնել աղի արդյունահանությամբ զբաղվողների բնակավայրի՝ Աղիաւանի հետ, որից էլ, ըստ Բ. Հարությունյանի, պետք է առաջանար Աղիւնը⁷: Վերջինիս արևմուտքից հարում էր Հալիսի ակունքների շրջանը: Իսկ նման տեղադրու-

¹ Хачатрян В., *Восточные провинции Хеттской империи*, Ереван, 1971, с. 23.

² Տահուկյան Գ., *Աշխ.*, էջ 327, ծանոթ. 15: Նույնի՝ Հայաստանի լեզվի հիմնամատչական ծագման վարկածը. «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, թիվ 1, էջ 94, ծանոթ. 18:

³ Արոնց Ն., *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, էջ 73:

⁴ «Атлас Армянской ССР», Ереван-Москва, 1961, с. 102, «Государство Урарту и сопредельные страны в VIII-VII в.в. до н. э.», карта.

⁵ Հերոդոտոս, IV, 17, 52:

⁶ Дьяконов И., *Предыстория армянского народа*, Ереван, 1968, с. 119.

⁷ Հարությունյան Բ., *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Վրնմտյան և հարավային աշխարհներ)*, Երևան, 2001, էջ 105: Այլուքերին Աղյունի հետ նույնացնում է նաև Ս. Պետրոսյանը և Աղիւնը կապում «առյուծ» բառի հետ. Ի. Ե. *leu -«առյուծ» արմատից (տես Պետրոսյան Ս., *Սանսկրիտի Սայր դիցուհու պաշտամունքի ակունքները*, «ՊԲՀ», 2004, թիվ 1, էջ 160-174):

թյան դեպքում անժխտելի է, որ, ըստ Չերոդոտոսի, Յալիսի վերին հոսանքի շրջանը գտնվել է Յայաստանում, ուրեմն ալիզոնները, որոնք Յալիսի վերին հոսանքի բնակիչներն են, մտել են XIII սատրապության մեջ և մ. թ. ա. V դարում արդեն կարող էին ներգրավված լինել հայագոյացման ոլորտը և աղբյուրներում արտացոլվել են Յալիս գետանվան ներքո: Զետևաբար խալուբների նույնացումն ալիզոններին անհիմն է, քանի որ երկուսն էլ ծագումնաբանորեն ունեն տարբեր արմատներ և միաժամանակ ծագումնաբանորեն լիովին տարբերվում են խալդայներից: Բ. Յարությունյանի կարծիքով, խալդայ կամ խալտայ անունը հայկական ծագում ունի և կապված է «խաղտ» հասկացության հետ, որ նշանակում է «կոշտ, կոպիտ»: Դրանից են կազմված խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ բառերը, որոնք բոլորն էլ նշանակում են «թանձրախօս, կոշտ ու կոպիտ բարբառով խօսող»¹: Ըստ հեղինակի, «խալդայ» նշանակել է թանձրախոս և կոպտախոս մարդ և հավաքական հասկացություն է: Զեղինակի ենթադրությամբ, խալդայների անվան տակ ամենից առաջ հասկացվում էին սկյութեն կոչված ցեղերը, որոնք չի բացառվում, որ իրականում սկյութական ցեղեր էին, որոնք Այսրկովկաս էին մուտք գործել կիմմերական և սկյութական ներխուժումների շրջանում: Սակայն շատ հնարավոր է, որ սկյութեն անվանումն էլ ընդհանրական էր, ուստի հեսպերիտ կոչված ցեղը (ըստ հեղինակի, ասպեյրների անունը այդպես էր արտացոլվել հույների մոտ, իսկ հեսպերուհիները հունական դիցաբանության մեջ նիմփաներ էին, որոնք ծայր արևմուտքում պահպանում էին ոսկե խնձորները), որը ոչ մի դեպքում չի կարող նույնանալ ասպեյրների հետ, պարզապես դրանցից մեկն էր և թողել է իր հետքը Սպեր գավառանվան մեջ²:

Սկյութենները, մեր կարծիքով, նույն խալդայներն են ընդհանրական ընկալմամբ: Տարբերությունն այն է, որ եթե խալդայների անունը հույներն իմացան հայերից և ընդունեցին որպես որոշակի ցեղի անուն, ապա սկյութենների անունը, որոնք հայերի համար նույն խալդայներն էին, հույներն արդեն ընդունեցին որպես հենց կոնկրետ ցեղի ինքնանուն, որի մասին հունական աշխարհն ուներ որոշակի պատկերացում: Հույները, խալուբ-խալդայների երկրից դուրս գալով, կրկին մտել էին Յայաստան և այդ մասին չեն իմացել: Խալդայների մի մասը, որ սկյութեններն էին, մտել են Յայաստանի մեջ, ընդ որում, խոսքը, հավանաբար, Գյումնիասի սկյութենների մասին է: Պատահական չէ, որ «Կյուրոպեդիա»-ի տեղեկություններում հստակ երևում է, որ խալդայներն այսպես թե այնպես կապ-

¹ Աճառյան Չր., Յայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 323:

² Յարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95-97:

ված էին հայերի հետ, և երկու ժողովուրդների դաշինքը պահպանվում էր, ըստ Քսենոփոնի, նաև իր ժամանակներում: Համենայն դեպս, «Անաբասիս»-ի վերջում մակրոնների և խալուբների միջև հիշատակվող խալոբայները ինքնավար էին: Դատելով շարադրանքից՝ այստեղ պարզորոշ կերպով սկյութները կոչված են խալոբայներ: Որ Հարպասոսն անցնելուց հետո հույները կրկին մտել էին Հայաստան, կարող է վկայել «Կյուրոպեդիա»-ի մի շատ արժեքավոր տեղեկությունը: Խալոբայներին, որոնք եկել էին հաշտություն կնքելու, Կյուրոսը հարցնում է. «Արդյոք չէ՞իք ցանկալ, որ դուք ևս վճարեիք նույնը, ինչ որ *մյուս Արմենները* (ընդգծումը մերն է-Խ.Յ.), և թույլտվություն ստանայիք մշակելու Արմենիայի հողերը, որքան որ կամենայիք»¹: Սույն տեղեկությունում ակնհայտորեն խալոբայները, որոնք բռնել էին հայացման ուղին, համարված են ուղղակիորեն Հայաստանի բնակիչներ, հայաստանցիներ և խալոբայները, ըստ «Անաբասիս»-ի, անկախացել էին մ. թ. ա. V դարի վերջերին, որոնք մինչ այդ մտնում էին XIII սատրապության մեջ:

Մ. թ. V դարի առաջին կեսին, երբ հայերեն էր թարգմանվում Մակաբայեցիների Երկրորդ գիրքը, 4-րդ գլխի 47-րդ տան՝ *εἰ καὶ ἔπι Σχυσθ ὦν ἐλεγον ἄπηλύνθ ησαν ἄχατάγνωστοι* արտահայտությունը հայերը թարգմանել են այսպես. «Թեպետ առաջի խաղտեաց դատ վարեին, իրաւ գտանէին»²: Ն. Ադոնցը և Ս. Երեմյանը սկյութների անվան տակ փորձում են տեսնել որոշակի ցեղ, որը տարբեր է խալոբայ-խալուբներից: Սակայն դժվար չէ նկատել, որ հայերեն թարգմանության մեջ Խաղտիքը հին հունարեն տեքստի *Σχυσθ ὦν*-ի փոխարեն օգտագործված է էթնիկական համարժեքության անենալայն և կոնկրետ նշանակությամբ, և ոչ մի հիմք չկա այստեղ տեսնել Քսենոփոնի սկյութներին, որոնք, լինելով նույն սակ-սկյութները, հայերի համար խալոբայներ են կոչվել, և այն ինչ-որ հայերի համար խալոբայներ են եղել, հույների համար էլ սկյութներ են եղել: Ուստի խալոբայների համադրումը սկյութները կոչվող որոշակի ցեղի հետ անընդունելի է: Սկյութները ևս խալոբայներ էին հայերի համար, սակայն հետաքրքիր է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայկական աղբյուրները միայն ճորոխի վերին և միջին հոսանքի շրջանում հաստատված սակ-սկյութներին են անվանում խալոբայներ, չնայած

¹ Քսենոփոն, *Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 112; Xenophon, Cyropaedia (with an English translation by Walter Miller), v. I, Cambridge, Mass.-London, 1960, Loeb Classical Library, p. 258-259.*

² Ադոնց Ն., *Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 305: Տես նաև Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «ՊԲՀ», 1968, թիվ 2, էջ 96:*

նրանք հաստատվել էին նաև Հայաստանի այլ շրջաններում, օրինակ Շակաշենում: Բ. Հարությունյանը գտնում է, որ սկյութնական ցեղերը հավաքական առունով կոչվել են խալդայներ կամ, դատելով հայկական աղբյուրներից, խալտայներ¹: Սկյութների անունից էլ պետք է ծագեր Սկյուդիսես լեռնաշղթայի անունը, որ Պոնտական լեռնահամակարգի ճյուղավորումներից մեկն է²: Արիստոտելի աշակերտներից Դիկեարքոս Մեսսենացին գրում է, որ Կողքիսի մոտ ապրող խալդերին ոմանք անվանում են խալդայներ եռավանկով³, այսինքն՝ սկյութական ցեղերը հավաքական առունով կոչվում են խալդայներ: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես արևելյան խալտայների փոխարեն հիշատակում է խալդայներին⁴, ցույց տալով, որ Կատարգա-Կղարջքի տարածքում սկյութական տարրը բավականաչափ մեծ թիվ է կազմել, որոնց շրջանում միևնույն ժամանակ տարածված է եղել մետաղագործությունը:

Ի. Դյակոնովը ժամանակին կարծիք է հայտնել, թե Արծկեի (Աղըլջևագի) արձանագրության մեջ հիշատակված Խալիտու երկիրը համապատասխանում է հայկական աղբյուրների Խաղտիքին⁵: Վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Խաղտիքի բնակչությունը հնդեվրոպական-իրանական է և ոչ թե քարթվելախոս⁶: Օրինակ, ըստ «Աշխարհացոյց»-ի՝ եգերացիք Պոնտոսի ծովը կոչում են Ակամսիս, իսկ Խաղտերը՝ Կականար⁷: Մենք կհսում ենք Ս. Պետրոսյանի կարծիքը, ըստ որի՝ ծովանունը բաղկացած է կակա (հմմտ. հուն. կակոս «վատ», «կատաղի», «սարսափելի») և մար (հմմտ. լատ. mare «ծով») բաղադրիչներից⁸: Համեմատության համար նշենք, որ հայ իրականության մեջ Աղթամար նշանակել է Աղի ծով:

Ավելի ուշ խալտայների՝ որպես մետաղագործների զբաղմունքը հատկացվում է նաև հայերի մի մասին: Պլինիոս Ավագը գրում է. «... այնուհետև Փառնակիայից 100 մղոն հեռավորության վրա՝ հսկայական

¹ Հարությունյան Բ., *Նշվ. աշխ.*, էջ 95:

² Меликишвили Г. А., *К истории...*, с. 81. Հմմտ. Ադոնց Ն., *Հայաստանի պատմություն*, էջ 304:

³ ИДПСК, «ВДИ», 1947, № 3, с. 254.

⁴ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Հին հունական աղբյուրներ», Բ. Դիոդորոս Սիկիլիացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 67:

⁵ Дьяконов И., Заметки по урартской эпиграфике, «Эпиграфика Востока», VI, 1952, с. 111-112; Он же: Предыстория армянского народа, с. 170-171: Հարությունյան Բ., *Նշվ. աշխ.*, էջ 102: Գ. Մելիքիշվիլին «Խալիտուն» նույնացնում է ասորեստանյան արձանագրությունների «Թաբալ»-ին և տեղադրում այն հայկական շրջաններից արևմուտք, սակայն այս նույնացնումը խիստ կասկածելի է (Меликишвили Г. А., *Նշվ. աշխ.*, էջ 76-77):

⁶ Меликишвили Г. А., *Наири-Урарту*, Тбилиси, 1954, с. 411.

⁷ Երեմյան Ս., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երևան, 1963, էջ 110:

⁸ Петросян С., Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических предсталиний древних армян, «ՀՀ ԳԱԱ «Լրարերի հասարակական գիտությունների», 1986, թիվ 4, էջ 53-64:

լեռներով շրջապատված ազատ քաղաք Տրապեզունտը, որից հետո գալիս է արմենոխալուբների ցեղը, իսկ 30 մղոն այն կողմ՝ Մեծ Հայքը»¹: Արմենոխալուբներին Պլինիոսը հիշատակում է նաև մեկ այլ հատվածում. «Թասիեի և Թրիարիեի տարածքները հասնում են մինչև Պարիհեդրյան լեռները, որոնցից այն կողմ գտնվում է Կողքիսի անապատը: Նրա կողքին՝ կերավնացիների ուղղությամբ, բնակվում են արմենոխալուբները, և մոսքերի տարածքն է՝ մինչև Կյուրոսի վտակ Հիբերոսը. նրանցից ներքև սակասաններն են, այնուհետև՝ մակերոնները և Աբսարրոս գետը»²: Ըստ Բ. Հարությունյանի, Պլինիոսի առաջին հիշատակության մեջ արմենոխալուբները համապատասխանում են սկյութեն-խալդայներին, որոնք բնակվել են Ծանախոձոր գետի վերին հոսանքի շրջանում և ներառվեցին հայագոյացման ոլորտը: Իսկ երկրորդ հիշատակության արմենոխալուբները տեղադրվում են այն խալուբների տարածքում, որոնց «Անաբասիս»-ը տեղորոշում է տաոխների հարևանությամբ³: Դժվար չէ նկատել, որ ինչպես Ստրաբոնի, այնպես էլ Պլինիոսի մոտ, խալուբը և խալդայը համարժեք են, քանի որ վերջիններիս շրջանում ևս զբաղվել են մետաղագործությամբ, երբ ավելի վաղ ժամանակների աղբյուրների վերլուծությունը ցույց էր տալիս նրանց հստակ տարբերակումը: Ընդ որում, Պլինիոսի առաջին վկայությունից պարզորոշ նկատվում է, որ այդ արմենոխալուբները մ. թ. I դարի արշալույսին չէին մտնում Մեծ Հայքի մեջ, որոնք մինչ այդ Փոքր Հայքի անբաժանելի մասն էին կազմում:

Ստրաբոնի ժամանակներում խալդայ հայկական անվանումը աստիճանաբար ներթափանցել էր Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերը, տարածվել հույների շրջանում, որը և պատճառ էր դարձել, որ Ստրաբոնը խալուբներին նույնացնի խալդայների հետ⁴: Խալդայ հավաքական անունով ցեղերը, որոնք հնդեվրոպական էին, մեծ մասամբ հայացան (XIII սատրապության տարածքում գտնված մասը-Խ. Հ.), իսկ Կղարջքի շրջանում՝ վրացացան: Դրա հետևանքով խաղտիք կամ խալդայների երկիր հասկացությունն աստիճանաբար տարածվեց հայերից հյուսիս-արևմուտք բնակվող մերձսևծովյան ցեղերի վրա, այսինքն՝ Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերի տեղաբնիկների վրա, որոնք զբաղեցնում

¹ ИДПСК, -“ВДИ”, 1949, № 2, с. 288. *Стёу նաև Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, III, 11-12.*

² ИДПСК, -“ВДИ”, 1949, № 2, с. 298. *Стёу նաև Pliny, Natural History, VI, XI, 29.*

³ Հարությունյան Բ., *Նշվ. աշխ., էջ 97-98: Ըստ Ս. Մուրավյովի, արմենոխալուբները տեղադրվում են Լյուկոս գետի վերին հոսանքի տարածքում՝ Կիրեսոն լեռնաշղթայի հարավային կողմից, Փոքր Հայքի սահմանի մոտ (տես Мухомов С., Заметки по исторической географии Закавказья. Плиний о населении Кавказа, -“ВДИ”, 1988, № 1, с. 160-161):*

⁴ Հարությունյան Բ., *Նշվ. աշխ., էջ 104:*

էին Տրապիզոնից մինչև ճորոխ գետն ընկած տարածքները¹: Խաղտիք է համարվել նաև Արսեսա-Արսիքը, որտեղ հաստատվել էին «աս» կոչված սկյութական ցեղերը, և ավելի ուշ Խաղտիք է անվանվում ճան-մակրոնների երկիրը²: Խաղտիքի առավել լայն տարածական ընդգրկումը առավել ուշ շրջանի աղբյուրներում պայմանավորված է բյուզանդական Խաղտիք վարչական միավորի (սկզբում՝ տուրմա, իսկ այնուհետև՝ բանակաթեմ) հանդես գալով, որի մեջ ներառվում է նաև ճորոխի ավազանը³: Կատարված քննությունից կարելի է եզրակացնել, որ Խաղտիքը, որը ճորոխի ավազանն է, ավելի ուշ ժամանակներում հարավից պետք է տարածվեր հյուսիս, և որ աղբյուրներում խալդայները համարվել են էթնանուն, իսկ խալուբները՝ զբաղմունք: Դատելով Կարինի և Դերջանի սահմանագլխին գտնված Խաղտոյառիճ գյուղի անունից՝ խալդայները շարժվել են նաև դեպի հարավ և հաստատվել էթնիկ այլ միջավայրում: Թերևս ուրարտական արձանագրությունների խալդիիրիուլխի տեղանունը կարելի է կապել խալդայ էթնանվան հետ և աշխարհագրորեն նույնացնել Խաղտոյառիճին: Խալդիիրիուլխին չի կարող նույնացվել Չալդրանի՝ Չլդր լճի ափամերձ շրջանի հետ, քանի որ տվյալ տարածքը գտնվել է էթիունի երկրի կազմում⁴: Մեր կարծիքով, տեղանվան մեջ –ուլխի–ն հայկական «աղխ»-ն է, և հետագայում տեղանունը պետք է ստանար –առիճ (առինճ, առինջ) «գյուղ, շեն» իմաստը:

¹ Անդ, էջ 101:

² Անդ, էջ 99, 109-111:

³ Անդ, էջ 111: Վ. Իվանովը երկաթի կամ պողպատի հունական ծեր չձևի (նաև խալուբների անունը) բխեցնում է խաթրեն *hapalki*-ից (տե՛ս Иванов В., Проблемы истории металлов на Древнем Востоке в свете данных лингвистики, «ՊԲՀ», 1976, թիվ 4, էջ 82-83: Հմմտ. նաև Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 710, прим. 1): Խեթական արձանագրությունների խալիպասուվա տեղանվան առաջին բաղադրիչը, ըստ Վ. Խաչատրյանի, հիշեցնում է ինչ-որ մասնագիտություն նշող խեթերեն *halipi*- բառը, ինչպես նաև հին հունական *χάλιπος* «մետաղագործ» տերմինը, որը հին հեղինակների աշխատություններում հաճախ տրվել է Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին (հմմտ. արմենոխալուբներ և խալուբներ): Հեղինակը միաժամանակ նշում է, որ խեթական աղբյուրներում *halipi*- բառը հանդիպում է հաճախ որպես աշխարհագրական անվանում, ըստ էության, նույնպես Հայկական լեռնաշխարհի հետ կապված (Խալիպի (այս լեռնանունը մենք կհասնենատենք նմանատիպ կազմություն ունեցող հետևյալ լեռնանունների հետ. երկաթահանք և երկաթահատաղ-Աղծնիք աշխարհում, երկաթաար-Ձանգեզուրի լեռնահամակարգում, երկաթաղբյուր-Նարաբաղի բարձրավանդակում, երկաթներ-Արճակ լճի արևմտյան կողմում և այլն), Խալիպուտա, Խալիպսիուրա): Հեղինակի քննությունը հիմք է տվել նրան ենթադրելու, որ խալիպասուվան գտնվել է Ասուվա երկրում (ըստ հեղինակի՝ հետագա երիվարքն զավառն է), որտեղ զբաղվել են մետաղամշակութամբ, որն այն ժամանակներում կապված էր նաև մարտակառքերի արտադրության հետ (տե՛ս Хачатрян В., Восточные провинции Хеттской империи, с. 127. Հմմտ. նաև Պետրոսյան Ս., Ասուվա երկիրը և զույգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը, «ՊԲՀ», 2002, թիվ 3, էջ 261-276; Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 334): Այսպիսի մոտեցման դեպքում անկասկած է, որ խալուբների անունը՝ որպես մետաղագործներ, հին հունարեն է ներթափանցել այլ լեզվից (խաթրենի՝ց) և ունեցել է այլ արմատներ:

⁴ Խաչատրյան Վ., Հայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 124:

«Անաբասիս»-ում հիշատակված արևելյան խալյուբները էթնիկական առումով նույնանուն են մոսքերին, որոնք պատկանել են իրանական աշխարհին՝ զբաղեցնելով ճորոխ գետից մինչև Կուր ընկած հողերը¹: Մենք ընդունում ենք նման տեղադրությունը: Բ. Չարությունյանը Քսենոփոնի խալյուբներին տեղադրում է ճորոխից արևելք և տաոխներից հյուսիս ընկած շրջանում, որը նույնանուն է արևմտյան Գուգարքին կամ Կատարգա-Կղարջքին²: Եթե նկատի ունենանք, որ նրանց երկրից հույները հասել են Չարպասոս-ճորոխ գետին, ապա այդ տեղադրությունը միանգամայն ընդունելի է:

Քվինտոս Կուրտիոս Ռուփոսի մի հիշատակության մեջ ասվում է.«... Ձախից գտնվում են կերկետների, մոսսինների և խալյուբների երկրները, մյուս կողմից՝ լևկոսիրներինն ու ամազոնուհիներինը»³: Ելնելով հյուսիսից հարավ թվարկումից՝ մոսսինները նույն մոսքերն են: Եթե խալյուբները հիշատակվեին լևկոսիրների ու ամազոնուհիների հետ, ինչը, մեր կարծիքով, ըստ սկզբնաղբյուրների, ավելի ճիշտ է, ապա մոսսիններ-մոսքերը կտեղադրվեն կերկետներից հարավ, այնտեղ, ուր Ստրաբոնի «Մոսքերի երկիրն» է: Չակառակ դեպքում, խալյուբները, որ նույն մոսքերն են, պետք է տեղադրվեն ճորոխի ստորին հոսանքի շրջանում, այսինքն՝ Ռուփոսը միևնույն ցեղի երկու տարբեր անվանումները, մեկը որպես զբաղմունք, մյուսն էթնանուն, ընկալում է որպես երկու տարբեր ցեղերի անուններ, որն իրական չէ: Այս շփոթը, երբ միևնույն էթնոսը հիշատակվում է երկու տարբեր անուններով, առկա է նաև Ստրաբոնի մոտ: Ստրաբոնը հավաստում է, որ Արտաշես Ա և Ջարեհ թագավորները խալյուբներից ու մոսսինոյկներից գրավեցին Կարենիտիսը և Քսերքսենեն (իմա՝ Դերքսենե-Դերջան)⁴: Ինչպես նկատում է Բ. Չարությունյանը, Ստրաբոնն՝ ազդվելով Քսենոփոնի վկայություններից, ինքն է խալդայների անունը փոխարինել խալյուբներով, իսկ այնուհետև, ելնելով այն իրողությունից, որ խալյուբներից արևելք գտնվում են մոսսինոյկները, որոնց ենթակայության տակ են խալյուբները, ավելացրել է մոսսինոյկների անունը, կամ էլ քսենոփոնյան խալյուբների հարևանությամբ բնակվել են մոսքերը, հանգամանք, որը հույն աշխարհագետի մոտ կարող էր ծնել խալյուբ-մոսսինոյկ զուգորդությունը: Նման զուգորդությունը կարող է ծագել հեղինակի մոտ, սակայն Կարենիտիսի և Քսերքսենե-Դերքսենեի գրավումը

¹ Չարությունյան Բ., *Աշխ.*, էջ 69, 78: Մոսքերի և ընդհանրապես XIX ստորապոթյան տարբեր ցեղերի մասին տես *Խորհրդյան Դ.*, *Աշխ.*, էջ 120-126:

² Չարությունյան Բ., *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգ...*, էջ 95:

³ Անդ., «*ВДП*», 1949, № 1, с. 288.

⁴ Ստրաբոն, *քաղեց և թարգմ.* Գ. Աճառյան, Երևան, 1940, էջ 57:

խալյուբների և մոսքերի կողմից բացառվում է, որովհետև Արտաշես Ա-ն, Ստրաբոնի հավաստմամբ, Մոսքերի երկրի տարածքը գրավել էր իբերներից¹: Ինչպես կարելի է ենթադրել Ստրաբոնի տեղեկություններից, խոսքն Արտաշես Ա-ի կողմից կատարված վերանվաճման մասին է, քանի որ Յերոդոտոսի և Քսենոփոնի ժամանակներում Դերջանը և Կարինը մտել են XIII սատրապության մեջ: Յերոդոտոսը Եփրատի ակունքները դնում էր Հայաստանում², իսկ համաձայն Քսենոփոնի, փասիանների, հեսպերիտների և տաոխների բնակության շրջանները համարվել են Հայաստան³: Ուրեմն, մոսքերը պատմական ինչ-որ ժամանակահատվածում, հավանաբար մ. թ. ա. III-II դարերում, ստեղծել էին սեփական պետական կազմավորումը, որը հարավային ուղղությամբ բավականին տարածվել էր:

Գայոս Պլինիոսի հիշատակած կեփալոտոմները⁴ ինչ-որ ցեղի մակդիրն է, որը բնակվել է Սև ծովի արևելյան ափին: Կեփալոտոմներ մակդիրը լիովին համապատասխանում է խալյուբներին, որոնց հունաց բյուրը հանդիպում է ճորոխի ստորին հոսանքի շրջանում և բնորոշում որպես գլուխ կտրողների:

Բ. Հարությունյանը գտնում է, որ մարերը նույնանում են «Անաբասիս»-ի մոսսինոյկների ենթակայության տակ գտնվող խալյուբների հետ և մարը ցեղի պարսկական անվանաձևն է⁵: Սակայն այդ փոքրաթիվ խալյուբները չէին կարող ինքնուրույն ցեղ դիտվել և հանդես գալ կոլխերի հետ: Պարզապես մոսսինոյկների մի մասը զբաղվել է երկաթագործությամբ և այդ մասը հույների համար ընկալվել է որպես առանձին ցեղ, և վերջին հաշվով նկատենք, որ մոսսինոյկները ևս ցեղի բնորոշում է հույների կողմից տրված, և թե ինչ է եղել ցեղի իրական էթնանունը մեզ համար անհայտ է:

Այսպիսով, աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ հին հեղինակները խալյուբների անվան տակ նկատի են ունեցել մետաղագործությամբ զբաղվող տարբեր ցեղերի, ընդ որում արևելյան խալյուբները նույնացվել են մոսքերին, որոնք եղել են իրանական ցեղ և բնակվել են ճորոխի ստորին հոսանքից մինչև Կուր գետն ընկած հողերում:

¹ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 102-103:

² Յերոդոտոս, I, 180:

³ Անաբասիս, էջ 98:

⁴ ИДИСК.-“ВДИ”, 1949, № 2, с. 291.

⁵ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 92:

К вопросу об идентификации и локализации халибов
Оганнес Хорикян
Резюме

Анализ источников показывает, что древние авторы под названием халибы имеют ввиду разные племена, занимающиеся металлообработкой. При этом, восточные халибы идентифицировались с мосхами, которые были иранским племенем и локализовались на землях в нижнем течении р. Чорох до р. Кура.

On the Issue of the Identification and Location of the Chalibyans
Hovhannes Khorikyan
Summary

The investigation of sources shows that the ancient authors accepted different tribes dealing with metallurgy under the name of Chalibyans. Therefore the Eastern Chalibyans are identified with the Moschians, being an Iranian tribe and living in the lands that stretch from the lower stream of the Çoroh River to the Cyrus River.